ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» հունվարի 2020թ. № 1

ԳՅՈՒԼՉՈՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով, 53-րդ կետի «բ» ենթակետով և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ անշարժ գույքի հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով Գյուլչորա Խորենի Պետրոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Գյուլչորա Խորենի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Հարավ Արևմտյան թաղամասում գտնվող 0,042 հա մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող 32,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան «ք.Սպիտակ, Հարավ Արևմտյան թաղամաս, թիվ 14ա» հասցեն փոխարինել «քաղաք Սպիտակ, Հարավ Արևմտյան թաղամաս, թիվ 14/1» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» հունվարի 2020թ. № 2

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի թիվ 52 որոշման կից ցուցակի մեջ Գառնիկ Մկրտչի Մկրտչյանի հայրանունը սխալ է գրվել, հիմք ընդունելով անձնագրային տվյալները, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089639 վկայականը և Գառնիկ Մկրտչի Մկրտչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխություն կատարել Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան. Ն.Աճեմյան, Սայաթ-Նովա, Կնունյանց, Ալ.Մանուկյան, Մյասնիկյան, Կամոյի, Թումանյան, Քըրք Քըրքորյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 52 որոշման մեջ՝ կից ցուցակի 713-րդ տողում նշված «Մկրտիչի» բառը փոխարինել «Մկրտչի» բառով:

2. Գառնիկ Մկրտչի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 304-30 կադաստրային ծածկագրով 0,057 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 262» հասցեն:

3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հունվարի 2020թ. № 3

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 75-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Սպիտակի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի միջև 2012 թվականի մարտի 21-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել երկու տարի ժամկետով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2020թ. № 4

ԱԼՎԱՐԴ ՀԱՅԿԱԶԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 71-Ա որոշումը, 2000 թվականի հունվարի 20-ին տրամադրված թիվ 69 բնակելի տարածության օրդերը և Ալվարդ Հայկազի Հարությունյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16092019-06-0040 վկայական՝ տրված 2019 թվականի սեպտեմբերի 16-ին) «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-5 թաղամաս, 4 շենք, 6 բնակարան» հասցեի 68,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 2 սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Ալվարդ Հայկազի Հարությունյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Ալվարդ Հայկազի Հարությունյան– ինքը՝ ծնված 1964 թվականին,

2) Արմեն Արտուշի Իգիթյան – տղան՝ ծնված 1989 թվականին,

3) Գևորգ Արտուշի Իգիթյան – տղան՝ ծնված 1990 թվականին,

4) Արամ Արտուշի Իգիթյան – տղան՝ ծնված 1993 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել՝

1) աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Միշա Թամամյանին ապահովել սույն որոշման կատարումը:

2) աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2020թ. № 5

ՍԱՄՎԵԼ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131247 վկայականը և Սամվել Սարոյի Ջուլհակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սամվել Սարոյի Ջուլհակյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06006 441-16 կադաստրային ծածկագրով 0,105 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 18» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2020թ. № 6

ԳԱՅԱՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23082019-06-0006 վկայականը և Գայանե Աշոտի Թումանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գայանե Աշոտի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Առափնյա փողոցի վրա գտնվող 06-006-0024-0016 կադաստրային ծածկագրով 0,016 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վրա գտնվող 06-006-0024-0016-001 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տրամադրել «քաղաք Սպիտակ, Առափնյա փողոց, թիվ 155» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հունվարի 2020թ. № 7

«ՍԻ ՓԻ ԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍԻ ՓԻ ԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի 2020 թվականի հունվարի 15-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍԻ ՓԻ ԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02614085) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճղ.» հասցեում գտնվող վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2020թ. № 8

ԱԼ.ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Գարիկ Մնացականի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալ.Մանուկյան փողոց, թիվ 36 հասցեում գտնվող 06-006-0500-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,06327 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցված 271,95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 9,46 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 9,75 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի և 5,51 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1397719 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ եզրակացությունը և Գարիկ Մնացականի Լամբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գարիկ Մնացականի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Ալ.Մանուկյան փողոց, թիվ 36 հասցում գտնվող 06-006-0500-0005 կադաստրային ծածկագրով 0,06327 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 271,95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 9,46 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 9,75 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը և 5,51 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գարիկ Մնացականի Լամբարյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Գարիկ Մնացականի Լամբարյանին.

1) համայնքի բյուջե վճարել 331 754 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2020թ. № 9

ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՎԱՐՇԱՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով, հաշվի առնելով, որ Ժողովրդական դեպուտատների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 19.07.1989թ. արձ. 14 կետ 10 որոշմամբ Գր.Լուսավորիչ թաղամասում գտնվող 06-006-0188-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,06 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը բնակելի տուն կառուցելու նպատակով հատկացվել է Սեյրան Վարշամի Սահակյանին, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա մինչև 1990 թվականին կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, Սեյրան Վարշամի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սեյրան Վարշամի Սահակյանի (ծնված 09.08.1951թ.) սեփականության իրավունքը Գր.Լուսավորիչ թաղամասում գտնվող 06-006-0188-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,06 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի, դրա վրա գտնվող 232,84 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 121,79 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղի, 31,82 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի, 9,04 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 27,31 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակի, 3,99 քառակուսի մետր մակերեսով կաթսայատան և 10 քառակուսի մետր մակերեսով ջրավազանի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Գր.Լուսավորիչ թաղամաս, թիվ 46» հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 15
ք.Սպիտակ